


# Ճարդ. Վարդան Յովիաննիսեանին նւիրւած պարսկերէն հագործի շնորհանդէսը՝ «Արևեսդագէտների գուլ» համալիրում



«ԱԼԻՋ» - Հինգչարթի, յունւարի 15-ին, Երեկ. ժամը 5-ին, իրանի «Արևեստագէտների տուն» մշակութային համալիրի «Բեթհառվէն» դահլիճում հանդիսաւոր մթնոլորտում տեղի ունեցաւ «Վարդան Յովիաննիսեանի ճարտարապետութիւնը» գրքի շնորհանդէսը, որը ուսումնասիրական խմբական աշխատանքի արդիւնքն է «Իրանի զարգացման շրջանի ճարտարապետութիւն» ոչ-պետական հետազօտական խմբի: Հատորի համահեղինակներն են ճարտարապետներ՝ Սոհրաբ Սորուշեանին, Վիկտոր Դանիէլը եւ Բիժան Շաֆէին, որոնց աշխատասիրած գիրքը լոյս է տեսել «Դիդ» հրատարակչութեան կողմից:

Ճարտարապետ Վարդան Յովիաննիսեանը, ինչպէս բազմիցս գրւել է նրա մասին, եղել է անցեալ՝ 20-րդ դարի 30-ական թւականներից սկսած իրանի (ի

մասնաւորի մայրաքաղաք Թեհրանի) մի շարք նշանաւոր պետական, կրթական, առեւտրական եւ բնակելի նորառու շինուածների նախագծողը, որոնցից նշել են՝ Արդարադատութեան պալատը, օրիորդաց ուսումնարանը (Սարգորդ Սախայի պողոտայում), Սաադաբադ համալիրի պալատներից, Դարբանդի հիւրանոցը, Թեհրանի եւ Սպահանի Սեփակ բանկի կենտրոնական մասնաճիւղերի շէնքերը եւ Շիրազի «Նամազի» տղայոց ուսումնարանը եւ բազմաթիւ բնակելի առանձնատներ:

Շնորհանդէսի երեկոյթը բաղկացած էր երկու բաժնից. առաջին բաժնում նշւեց. «Զարգացման շրջանի ճարտարապետութիւն» խմբի գործունէութեան 25-ամեակը եւ ճարտապետներ՝ Բիժան Շաֆէին, Վիկտոր Դանիէլը, հատորի հրատարակչական տնօրէն տկն. Թարաթարային ու Երեկոյի հաղորդավար ճարտ. Համիդ Նասեր-Նասիրը խօսեցին իրանում ինքնուրոյն հետազօտական աշխատանք տանելու դժւարութիւնների մասին եւ խմբի տարած աշխատանքների ու հրատարակած երեք գրքերի վերաբերեալ, իսկ երկրորդ բաժինը մասնաւորապէս յատկացւած էր Վ. Յովիաննիսեանի մասին աշխատասիրւած հատորի շնորհանդէսին, որտեղ հանգամանօրէն բանախօսեցին՝ ճարտարապետներ՝ դոկտ. Էսքանդար Մոխթարին, Սոհրաբ Սորուշեանին եւ դոկտ. Ալիաքբար Սարեմին, որոնց ելոյթներին եւ արծարծած մտքերին կանդրադառնաք առանձին յօդւածով: Բանախօսների ելոյթների հետ միաժամանակ, դահլիճի բեմում ցուցադրւում էին ճարտարապետ Վարդան Յովիաննիսեանի եւ այլ ճարտարապետների (Զարգացման շրջանի) նախագծած կառոյցների տեսասահիկները (սլայդ): Երեկոյի աւարտին տեղի ունեցան ընդունելութիւն եւ գրքի վաճառք: